ՀԱՂԲԱՏԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

I ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Սուրբ Նշանը Հաղբատավանքի գլխավոր և ամենահին եկեղեցին է։ Նրա կառուցումն սկսվել է 976/7 թթ. Խոսրովանուշ թագուհու նախաձեռնությամբ։ Ս. Նշան եկեղեցու գմբեթի թմբուկի վրա պահպանվել է կառուցման բուն արձանագրությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «Ի Նխ (440+551—991) թուակ[անութեանս] հայոց Սիմեւոն հայր և Տիրատուն երեց շինեցաք զեկեղեցիս փրկութեան Սիրատա և Գուրգենա»։

Այստեղից եզրակացնում ենք, որ տաճարի կառուցումն ավարտվել է 991 թ.։ Եվ եթե նրա հիմնադրման թվականն ընդունենք 976-ը, նշանակում է ս. Նշան եկեղեցու կառուցումը տևել է 15 տարի, որը չափավոր ժամանակաշրջան է մի այդպիսի բարձր ճարտարապետություն ունեցող կառույցի համար։ Արձանագրության մեջ հիշատակվող «հայր Սիմեւոնը» վանքի հիմնադիր վանահայրն է և մեզ ծանոթ է մի շարք այլ արձանագրություններից ու մատենագրական վկայություններից, իսկ Տիրատուն երեցը՝ նրա օգնականը կամ աթոռակիցը, որը, ինչպես պարզվում է այդ արձանագրության բովանդակությունից, Սիմեոնի հետ միասին ղեկավարել է տաճարի կառուցումը։ Սիրատը և Գուրգենը Բագրատունյաց Աշոտ Ողորմած թագավորի որդիներն են, մեկը Սմբատ Տիեզերակալը, որ Անիում գահակալեց 977—990 թթ., իսկ մյուսը՝ Գուրգենը, որ X դարի վերջին երկու տասնամյակներում Լոռիում հիմնադրեց Կյուրիկյան թագավորությունը և Հաղբատավանքը դարձրեց թագավորության հոգևոր կենտրոնը։ Գուրգենի և Սմբատի արձանները զետեղված են տաճարի արևելյան պատի արտաքին երեսին. երկուսն էլ ներկայացված են երկար շրջազգեստով և մեկը գլխի արարական փաթաթանով։ Նրանք կանգնած են միմյանց հանդեպ և, իբրև այդ եկեղեցու կառուցող տերեր, ձեռներին բռնել են ս. Նշանի փոքրօրինակը։

Գրավոր աղբյուրներից հայտնի չէ ս. Նշանը կառուցող ճարտարապետի անունը, բայց ավանդաբար, սերնդից-սերունդ հաղորդվում է, որ նրա կառուցողը Անիի Բագրատունյաց պալատական ճարտարապետ Տրդատն է։ Այդ մասին առաջին անգամ գրել է Հովհաննես Ղրիմեցին իր անտիպ աշխատության մեջ. «Ճարտարապետ այսր գերապանծ շինուածոյ աւանդի լինել հռչակաւորն Տրդատ, որ ծաղկեցաւ ի վախճան տասներորդ դարու և ի սկզբն ԺԱ երորդին, որ և շինեաց զմեծ կաթուղիկէն յԱնի, և զմիւս եկեղեցի հոյակապ

(Արգինայի, ի տան կաթուղիկոսարանին, յաւուրս կաթուղիկոսութեան Թաչկայ, և զայլ յոլով շինուածս մի քան զմի գերազանցեալ յարուեստի»[1]։

Հետագայում ուսումնասիրություններ կատարող հեղինակներն այդ ավանդությունը հավանական են համարել։ Օրինակ, Ալեքսանդր Երիցյանը գրում է. «Պետք է ենթադրել, որ այս տաճարի պլանի հեղինակը հենց այն հայ ճարտարապետ Տրդատն է, որը կառուցել է Անիի հռչակավոր Մայր տաճարը»[2]։

Կոստանդին Հովհաննիսյանը Տրդատ ճարտարապետին նվիրած իր հատուկ մենագրության մեջ մի շարք եկեղեցական և աշխարհիկ շենքերի ու այլ կառուցվածքների՝ Տրդատ ճարտարապետին պատկանելու հարցը թողնում է անորոշ, պատճառաբանելով, որ միայն ճարտարապետական ձևերի արտաքին նմանությունը, առանց գրավոր հաստատուն վկայության և մանրամասն քննության, բավական չէ այդպիսի եզրակացության հանգելու համար։ Այդ կառուցվածքների շարքում Կ. Հովհաննիսյանը հիշատակում է Սանահնի և Հաղբատի վանքերի գլխավոր տաճարները, Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցին Անիում, Մարմաշենի տաճարը, Անիի պարիսպները, Արգինայի կաթողիկոսարանը և Բագրատունյաց պալատներն Անիում։ Միայն Մարմաշենի տաճարն է, որ Անիի կաթողիկեի հետ ունեցած մեծ նմանությունների համար Կ. Հովհաննիսյանն անվիճելիորեն համարում է Տրդատ ճարտարապետի կառուցածը։

Մեր կարծիքով, անորոշության մեջ թողնված հուշարձանների այդ շարքից պետք է առանձնացնել նաև Հաղբատի ս. Նշան տաճարը, որովհետև այդ եկեղեցու՝ Տրդատի ձեռքով կառուցված լինելը ոչ միայն արդի ճարտարապետների ենթադրությունն է ոճական նմանություններից ելնելով, այլև, ինչպես վերևում տեսանք Հովհաննես Զրիմեցուց մեջ բերված տողերից, այդ մասին Հաղբատում գոյություն է ունեցել հնից եկող ավանդություն, որ դարից-դար անցնելով հասել է մեր օրերին։ Այդ ավանդության հիման վրա է, որ Զրիմեցին ս. Նշանի կառուցումը վերագրել է Տրդատ ճարտարապետին։ Մենք ևս այդ ավանդությունն անհիմն չենք համարում. ինչպես հայտնի է, մատենագրական հին տվյալներով Տրդատ ճարտարապետին են վերագրվում միայն Արգինայի տաճարը, Անիի կաթողիկեն, Զվարթնոցի վերարտադրությունը հանդիսացող գագկաշեն տաճարն Անիում և Սոֆիայի տաճարի փլված գմբեթի վերականգնումը Կոստանդնուպոլսում։ Հասկանալի է, որ միայն այսքանը քիչ է իր առաջ լայն ասպարեզ ունեցող պալատական մեծանուն ճարտարապետի ամբողջ կյանքի համար։ Նա անպայման կառուցել է իր ժամանակի մի խումբ այլ կոթողներ ևս, որոնցով այնքան հարուստ է Անիի Բագրատունյաց Հայաստանը։

Ժամանակի տեսակետով էլ խիստ հարմար է ս. Նշանի կառուցումը Տրդատ ճարտարապետին վերագրելը։ Եթե նա X դարի 60-ական թթ. դեռևս պատանի կամ երիտասարդ, աշակերտություն արած լիներ Սանահնի վանքի շինության ժամանակ, ապա 10 տարուց հետո, 976—977 թթ., երբն առանձնապես աշքի ընկնող երիտասարդ ճարտարապետ, կարող էր ինքնուրույն կերպով նախագծել և նույնիսկ անձամբ ղեկավարել 15 տարի տևող այդ շինարարությունը։

---

1 «Պատմութիւն վանիցն Հաղբատայ ս. Նշանին, աշխատասիրեալ Յովհաննու վարդապետի Փորիշանցւոյ, Զրիմեցի վերաձայնելոյն, ձեռագիր արտագրություն, էջ 75։ 1893, էջ 121։

2 «Кавказская старина», ежемесячный журнал, год I, 1872/18.3, Тифлис, էջ 85։

3 К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951, էջ 21։

Այդ ժամանակ Տրդատն արդեն Բագրատունյաց տան պալատական ճարտարապետն էր և ձեռնարկել էր Արդինայի տաճարի կառուցումը։ Հասկանալի է, որ Խոսրովանուշ թագուհին իր սրտի բաղձանքը հանդիսացող ս. Նշանի նախագծումն ու կառուցումը չէր կարող հանձնարարել մի երկրորդական, համբավ չունեցող ճարտարապետի, երբ նրա աչքի առաջ կանգնած էր մեծատաղանդ Տրդատը։

* *

Հաղբատի ս. Նշան եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն քառանկյունի և ներքուստ խաչաձև դահլիճ է՝ կառուցված սրբատաշ որձաքարով, որի կենտրոնում բարձրանում է բոլորշի թմբուկով լայնանիստ գմբեթը։ Այդ գմբեթն ավարտվում է մոտ 45° թեքություն ունեցող սալածածկ վեղարով։

Դահլիճի ներսում գմբեթաղահ մույթեր կամ սյուներ չկան, գմբեթը նստած է տաճարի չորս անկյունների վրա կառուցած կրկնահարկ ավանդատների՝ դեպի եկեղեցու կենտրոնը ձգված, որմնամույթերի տեսք ունեցող անկյունամասերի վրա, որոնք կառուցված են հատկապես գմբեթի մեծ ծանրությունը կրելու համար։

Տաճարն արտաքուստ յուրաքանչյուր կողմի վրա ունի երկուական բավականաչափ խոր ակոսող խորշեր, որոնք համընկնում են գմբեթակիր որմնամույթերին և, բացի որմերի զանգվածը թեթևացնելուց, գեղեցկացնում են տաճարի արտաքին տեսքը։ Արևմտյան կողմի զույգ ավանդատների վերին հարկերի միմյանց նայող հարավային և հյուսիսային պատերը բաց են և, ըստ երևույթին, ծառայել են Կյուրեղյան տան անդամներին՝ իրեն արքայական օթյակ։

Տաճարի ավագ սեղանը բավականին բարձրադիր է և ընդարձակ։ Նրա կիսաբոլոր պատերի վրա պահպանվել են երկու շերտ որմնանկարներ, վերինը՝ համեմատաբար լավ վիճակում, իսկ տակինից մնացել են միայն հետքերը։ Որմնանկարների վերին շերտն անվերկբայորեն պատկանում է XIII դարի երկրորդ կեսին և, ամենայն հավանականությամբ, նկարված է Խութլուբուղայի կամ նրա վասալներից մեկի միջոցներով, որովհետև նույն տաճարի հարավային պատին բավարար վիճակում պահպանվել է Խութլուբուղայի դիմանկարը, որն իր կատարողական արվեստով և ներկերով խիստ նման է ավագ խորանի վերին շերտի որմնանկարներին։

Ն. Տոկարսկին, նկատի ունենալով հայոց եկեղեցու պատկերամարտության հանգամանքը, վերոհիշյալ որմնանկարների գոյությունը Հաղբատում կապում է քաղկեդոնական դավանանքի հետ և հայտարարում, թե երկու շերտ որմնանկարները ցույց են տալիս, որ Հաղբատը երկար ժամանակ գտնվել է քաղկեդոնականների ձեռքում[4]։ Այս ենթադրությունը միանգամայն անհիմն է, որովհետև և՛ հնում՝ VI—VII դարերում, և՛ մանավանդ XIII դարում հայոց եկեղեցին, առանց քաղկեդոնական լինելու, ոչ միայն չէր մերժում սրբապատկերները ու եկեղեցու բարերար թագավորների և իշխանների դիմանկարները, այլև շատ անգամ հայոց կաթողիկոսներն իրենք էին եկեղեցին զարդարում այդ-

[4] Н. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, էջ 171. Նաև նույն հեղինակի՝ Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 283։

պիսի պատկերներով։ Մեր տաճարին իրրև հիմք կարող են ծառայել Արուճի եկեղեցին, Տաթևի վանքը, Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցին, Պատնին, Անիի եկեղեցիները, Ագթամարի տաճարը, Դվինի կաթողիկեն և այլն, որոնց մեջ



Նկ. 1. Կաթողիկեն եկեղեցու և մեծ մատուռն հատակագիծերը
Զաֆարյան թյուն ճարտ. Հովհ. Հակոբյանի

և՛ սրմնանկարների, և՛ սրմնաքանդակների եղանակով պահպանվել են բազմաթիվ սրբապատկերներ։ Եթե դրանց ավելացնենք նաև Հաղբատի, Ագթամարի, Ծանոռնի, Հաղբատի, Անիի Գագկաշեն տաճարի կառուցող տերերի արձանները, ապա ավելի ակներև կդառնա Տոկատեսկու սիրալը և կոլարզվի, թե ինչո՞ւ Խաչիկուրուգայի դիմանկարը գտնվում է Հաղբատի ս. Նշան եկեղեցու պատին։

Ս. Նշանի տանիքը ծածկված է սրբատաշ սալաքարերով. դրանք թեև մի քանի անգամ մասնակի նորոգման են ենթարկվել, բայց պահպանել են իրենց հին ձևերն ու չափերը։ Հաղբատի ս. Նշանը, Սանահնի գլխավոր եկեղեցու

նման. երեք կողմերից (բացի հարավից) շրջապատված է ավելի ուշ ժամանակների զանազան հավելվածներով, որոնք այսօր հնարավորություն չեն տալիս տաճարը տեսնել իր ամբողջության մեջ։ Հավելվածների տակ են մնացել նրա արևմտյան և հյուսիսային ճակատների շրամուտքերը՝ իրենց հարդարանքներով, մի շարք լուսամուտներ, խորշերից մի քանիսը և բազմաթիվ վիմական արձանագրություններ՝ ամբողջապես կամ մասամբ։

Ա. Նշան եկեղեցին անդադարտ վիճակում չի հասել մեր օրերին. մի քանի անգամ ենթարկվել է մասնակի նորոգումների, որոնց հետքերը պահպանվել են զանազան տեղերում։ Նորոգումների մասին կան նաև գրավոր վկայություններ՝ վիմական արձանագրությունների մեջ և մատենագրական երկերում, բայց միշտ չէ, որ կարելի է այդ գրավոր տեղեկությունների հիման վրա պատկերացնել, թե ինչպիսի նորոգում է կատարվել, որովհետև հիշատակագրողները հաճախ բավականացել են ընդհանուր դարձվածքներով ու բառերով և չեն նշել նորոգման ենթարկված մասերն ու կատարված աշխատանքի ծավալը։ Այդ պատճառով այսօր դժվար է ասել, թե տաճարի ո՞ր մասի նորոգումը ե՞րբ է կատարվել, թեև ընդհանուր առմամբ դժվար չէ հին նորոգումը զանազանել նորից։

Ա. Ա. Նշան եկեղեցու հյուսիսային մուտքի կամարի վրայի մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ եկեղեցու կառուցումից 25 տարի հետո, այսինքն հայոց ՆԿԵ (465+551=1016) թվականին, Հոնովարի որդի Մուկ իշխանը նորոգել է կաթողիկեն, որ ավերված է եղել երկրաշարժից («Նոր նորոգեցի զսուրբ կաթողիկէս, որ էր աւերեալ ի սաստիկ շարժմանէ»)։ Հասկանալի է, որ կաթողիկեն եկեղեցու գմբեթն է, բայց թե ի՞նչ իմաստ ունի նոր նորոգեցի-ն դժվարանում ենք բացատրել, որովհետև դա չի կարող նիմից նորոգեցի, ամբողջովին նորոգեցի իմաստն ունենալ, բանի որ գմբեթի թմբուկի վրա պահպանվել է տաճարի կառուցման 991 թ. արձանագրությունն իր սկզբնական վիճակում։ Ուստի մնում է ենթադրել, որ երկրաշարժից գմբեթի վեղարի կամ գուցե նաև թմբուկի մի կողքի վրա առաջացած են եղել ճեղքվածքներ, որոնք և նորոգել է Մուկ իշխանը։ Այլապես պետք է ենթադրենք, որ նորոգման ժամանակ գմբեթի հին քարերը նույնությամբ վերաշարվել են իրենց տեղում։ Մի բան պարզ է՝ այդ նորոգումը մասնակի բնույթ է ունեցել և եկեղեցու կառուցվածքի մեջ որևէ փոփոխություն չի մտցրել։

Բ. Սամուել Անեցին իր ժամանակագրության մեջ ասում է, որ 1105 թ. Խզրլը (Զդիլ ամիրա, սելջուկյան իշխան) գրավեց Լոռին և Հաղբատն ու Սանահինը այրեց[5]։ Նույնն է կրկնել նաև Մխիթար Այրիվանեցին, միայն թե տարեթիվը թողել է անորոշ, 1101-ի և 1111-ի միջև[6]։ Թե ի՞նչ է այրել Խզրլը Հաղբատում և Սանահնում՝ ստույգ չգիտենք, հավանաբար՝ վանքի փայտաշեն շինները, որովհետև գլխավոր տաճարն այրելու և դրանից հետո նորոգելու մասին որևէ արձանագրություն չկա։ Մեր այս ենթադրությունն ավելի հավանական է դառնում, երբ նկատի ենք առնում այդ նույն Խզրլի վերաբերյալ

5 «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 121։

6 «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 61։

Կիրակոս Գանձակեցու վկայությունը՝ Հաղբատը և Սանահինը գրավելու վերաբերյալ, թեև նա ոչինչ չի ասել այդ վանքերն այրելու մասին[7]։

Գ. Սամուել Անեցին գրում է, որ Հայոց 588 թ. (588+551=1139) արեգամսի 17-ին, երկրաշարժից կործանվել է Գանձակ քաղաքը, և «Եկեղեցին Հաղբատայ փլուզանի»[8]։ Թե ի՞նչ աստիճանի է եղել փլված ս. Նշանը, այժմ անհնարին է պարզել, բայց, քանի որ պատերի ներսի երեսին բազմաթիվ տեղերում պահպանվել են հին արձանագրություններն իրենց սկզբնական տեղում, յուրաքանչյուրը գրված մի քանի քարի վրա, դրանից հետևցնում ենք, որ վնասն այնքան էլ մեծ չի եղել, և Սամուել Անեցին մի քիչ չափազանցության մեջ է ընկել։

Դ. Այդ դեպքից հետո, առանց հիմնավոր նորոգման, եկեղեցին մնացել է մոտ 50 տարի և առաջին անգամ, հիշյալ երկրաշարժից հետո, տաճարի նորոգման արձանագրություն է գրվել 1188 թ.։ Վերջինիս մեջ ասվում է, որ «ամենն ինչով անպիտան» Սարգիսը ՈՎԷ թ. (1188) հիմքից նորոգել է սուրբ Նշանի տաճարը և խնդրում է, որ այդ առթիվ հիշեն իրեն և իր ծնողներին։ Այս Սարգսի որևէ աշխարհիկ և հոգևոր տիտղոս չունենալը ցույց է տալիս, որ նա ոչ թե նորոգման պատվիրատուն է, այլ, հավանաբար, նորոգող վարպետը, որ հիմքից սկսած նորոգել է տաճարը։ Այստեղ խոսքն ընթացիկ, բայց ոչ այնքան մեծ նորոգման մասին է, որովհետև ծանրակշիռ նորոգման համար հաղիվ թե այսքան հասարակ ու պարզ արձանագրություն գրվեր։

Ե. Գլխավոր տաճարի նորոգման վերաբերյալ տեղեկություն է պահպանվել նաև 1221 թ. մի արձանագրության մեջ։ Այդտեղ վանքի առաջնորդ Հովհաննես Խաչենեցին գրում է, որ իր երկարամյա առաջնորդության տարիներին ըստ իր կարողության, սպասավորել է վանքին և օժանդակել նրա առաջադիմության. շինարարական աշխատանքներ է կատարել ս. Նշան եկեղեցում, սալել է նրա կաթողիկեն (գմբեթը), կազմել է փայտե փորագիր դռներ, գրել է տվել ձեռագիր գրքեր, եկեղեցին զարդարել սպասով, շինել ավագ սեղանի գոտին, երեք խաչեր է նվիրել վանքին և նորոգել ս. Գրիգոր եկեղեցին։ Հովհաննես Խաչենեցու արձանագրության մեջ թվարկված աշխատանքներից երևում է, որ դրանք մեծ մասամբ բարեկարգմանն են ծառայել և ոչ թե շինարարությանը։ Այնուհետև վիմական արձանագրությունների մեջ և մատենագրական աղբյուրներում երկար ժամանակ ոչ մի տեղեկություն չունենք Հաղբատի գլխավոր եկեղեցու նորոգումների վերաբերյալ։

Զ. Օտար ցեղերի տիրապետության դառն ժամանակներում որևէ շինարարական աշխատանք ձեռնարկելու ոչ մի հնարավորություն չի եղել։ Միայն XVII դարի կեսերին է, որ ս. Նշանի վրա երկու անգամ կատարվել է նորոգման որոշ աշխատանք. 1651 թ. Մաղամացի (Թիֆլիսեցի) խոնա (վաճառական) Բեհրուդը եկեղեցու հարավային փլված կամարն է վերաշինել առնջեցի որմնադիր վարպետ Նավասարդի ձեռքով, երկրորդ նորոգումը կատարել է Մահդեսի Ազիզը 1655 թ.։

Տաճարի ներսում, հարավային պատին կան մի քանի երեսապատ քարեր, որոնց տեղը փոխվել է նորոգման ժամանակ. վերաշարված բարերի վրա գրը-

7 «Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 99։

8 Սամուել Անեցի, էջ 132։

ված արձանագրության մասերս ընկել են տարբեր տեղեր։ Այդ աղավաղումը կատարվել է XVII դարում, երբ 1668 թ. մեծ երկրաշարժից հետո վերաշարվել են տաճարի ներսի երեսի թափված երեսապատ քարերը։ Ի միջի այլոց, այստեղ միայն հարավային պատի ստորին մասի երեսապատ քարերն են վերաշարվել, իսկ վերին մասերն այդ ահեղ երկրաշարժի ժամանակ մնացել են անվթար, նրանց վրա եղած որմնանկարները XIII դարի կեսերից սկսած պահպանվել են իրենց բուն տեղում։

Այս երկրաշարժի պատճառած վնասների մասին պահպանվել են մի շարք գրավոր վկայություններ մանր ժամանակագրությունների մեջ, հետևյալ բովանդակությամբ. «Թվին ՌՈԺԷ (—1668) յունվար ամսոյ Դ(4) սաստիկ և ահագին շարժ եղև յամենայն սահմանս Ատրպատականի, ի յառաւօտուն մինչ զհարցի ժամն ասէաք։ Եղև թնդումն և զկնի նորին եկն շարժն և այնքան ուժգին եղև, մինչ զի կանթեղք և ջահք, որք կախեալք էին յեկեղեցւոջն ամենեքեան տարաբերեալք երթային և դային. և մարդիկք, որք ընդ երեսս որմոյ յեցեալք կանգնեալք կային ի տեղւոյն ի բաց ձգեաց. և եղև շարժս այս յԱրտաւել քաղաք, ի Թաւրէզ, յԵրևան, ի Տփխիս, ի Գանջայ, ի Շամախի, ի Դամուրդափուն և յամենայն սահմանս իրեանց։ Եւ յայսմ շարժմանէ Հախպատայ վանից եկեղեցոյ ներսի երեսէն որմոյ քարինքն թափեցան և եկեղեցին, որում անուն Տեսանց (Դրսեվանք—Կ. Ղ.) ասէին, որ ի մէջ Հախպատայ և Սանահնոյ կար շինեալ, բնաւին բլաւ։ Եւ ի Տփխիս քաղաքին մէկ նոր շինեալ եկեղեցւոյ որմն և վերին բերդի որմն խախտեցաւ։ Իսկ Շամախի քաղաքն հիմն ի վեր լեալ ամենեին տապալեցաւ, որ բնաւին ոչ մնաց շինուածք և անթիւ մարդիկք մեռան, զորոց զթիւն աստուած միայն գիտէ» (ձեռ. № 1773, էջ 430ա և բ)[9]։

Է. Ս. Նշան եկեղեցու վերջին նորոգումը կատարել է Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն, պետական միջոցներով, 1940-ական թթ. հնագետների և ճարտարապետների հսկողության ներքո։ Նորոգվել է գլխավորապես ծածկը և ամրացվել են պատերը։ Այդ նորոգումները ևս որևէ փոփոխություն չեն առաջացրել տաճարի ձևի և կառուցվածքի մեջ։

Հաշվի առնելով վերը թվարկված բոլոր նորոգումները, մենք մանրամասն բննությամբ պարզել ենք, որ ս. Նշան եկեղեցին իր կառուցման ժամանակից մինչև այսօր կանգուն է մնացել իր նախնական տեսքով, առանց զգալի փոփոխությունների, և վիմական արձանագրությունների ու մատենագրական վկայությունների մեջ հաճախակի հիշատակվող բլավ, ավերեցավ, կործանեցավ բառերը չափազանցված են։

2. ԹԱՄԱՏՈՒՆԸ ԿԱՄ ՄԵԾ ԳԱՎԻԹԸ

Հաղբատի մեծ ժամատունը շինված է գլխավոր եկեղեցուն կից, նրա արևմտյան կողմում։ Սա Հաղբատի ամենանշանավոր ճարտարապետական կառուցվածքն է, որի մասին մեծ հիացմունքով են խոսել նաև մեր հին մատենագիրները։ Ժամատան տեղում սկզբնապես կառուցված է եղել մի գավիթ, իբրև տոհմական տապանատուն Գյուրիկյան թագավորական տան անդամների համար։ Դեպքերին ժամանակակից և ականատես Կիրակոս Գանձակեցին այս

9 «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հատ. 1, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 251, ծան. 31։

կառուցումների մասին իր պատմության մեջ գրել է. «Սա (առաջնորդ վանքին՝ Հաղբատայ Յովհաննէս Խաչենեցի) բակեայ զդաւիթն փոքրագոյն, որ ի դուռն կաթուղիկէին Հաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ»[10]։

Կյուրիկյան տոհմի տապանատունը կառուցված է եղել Կյուրիկե III թագավորի դուստր Մարիամի կողմից, նախապես այնտեղ թաղված իր հորաքույր Ռուզուքանի և մոր՝ Բամարի դերեզմանների վրա, տայոց ՈԼԴ (634 + 551 = 1185) թվականին։ Կառուցման արձանագրությունը փորագրված է տապանատան հյուսիսային կողմի զույգ մուտքերի կամարավոր գլխին, որը չի քանդվել մեծ ժամատունը շինելու ժամանակ։ Մարիամ արքայադուստրն այդ տապանատունը կառուցման արձանագրության մեջ անվանել է տուն աղորիգ, թեև հնում այդպես էին կոչվում միայն եկեղեցիները։ Մարիամը վերջում խնդրել է բոլոր այցելողներին, որպեսզի իրենց աղոթքի մեջ հիշեն «զմեզ և զնախնի թագաւոր ազգականս մեր, որ հանգուցեալ են առ դրունս սրբոյ կաթուղիկէիս»։ Եվ իրոք, Կյուրիկյան տոհմի անդամներից շատերը, ինչպես այդ երևում է ժամատան հատակին գտնվող մի քանի տասնյակ տապանաքարերից, թաղված են Մարիամի կառուցած տապանատան մեջ։

Ո՞նչ ձև է ունեցել այդ տապանատուն-դավիթը և ի՞նչ է պահպանվել նրանից մեծ ժամատունը շինելուց հետո։ Անվիճելիորեն հին դավթին են պատկանում մեծ ժամատան դեպի հարավ և հյուսիս դուրս շեշտված մասերը երկկամար մուտքերի բացվածքով, որոնք այժմ մինչև կամարները շարված են սրբատաշ, քիչ դեպի դուրս ընկած պատերով։ Միայն վերին կամարներն են, որ չեն շարվել և հին ժամանակներից ի վեր բաց են մնացել, իսկ մուտքերի երկու կամարների կենտրոնի սյուները մնացել են շարված պատերի մեջ։ Մուտքերը փակվել են մեծ ժամատունը շինելու ժամանակ։ Դա երևում է նրանից, որ այդ միանման պատերից հյուսիսայինի վրա փորագրված են XVIII դարին պատկանող մի քանի արձանագրություններ։ Այսպիսով պարզվում է, որ մարիամաշեն հին դավիթը, սրից պահպանվել են հյուսիսային և հարավային ծայրամասերը, եղել է հյուսիսից դեպի հարավ ձգված երկթեք տանիքով թաղակապ մի շինություն, որի ձևը սովորական էր հնում հայկական ճարտարապետության մեջ և կոչվում էր պողոտաձև դավիթ։ Սա V դարում տարածված տաճարների արտաքին սյունասրահների հետագա զարգացած ձևն է, ժամանակի ոգուն համապատասխանող, բայց այն տարբերությամբ, որ հնում արտաքին սյունասրահ ծածկույթը տաճարը շրջափակում էր երեք կողմերից՝ հարավից, արևմուտքից և հյուսիսից, իսկ պողոտաձև դավիթը՝ միայն մի կողմից՝ արևմուտքից, ինչպես այդ տեսնում ենք Հաղբատում։

Մարիամաշեն պողոտաձև դավթի հյուսիսային ճակատը զարդարված է հյուսածո քառակների լայն դոտիով, որ խիստ բնորոշ է Հաղբատի և մասամբ նաև Սանահնի համար։ Նման քանդակագոտի պահպանվել է Եռախորան խաչքարերի պատվանդանի, մեծ ժամատան արևմտյան մուտքի շրջապատում և այլ տեղերում, իհարկե ամենուրեք նոր զարդաձևերով, առանց կրկնության։ Հարավային ճակատի վրա մարիամաշեն դավիթը զարդագոտի չունի։ Այդտեղ չկան նաև արձանագրություններ։ Կարծում ենք, որ այդ ճակատը ևս սկզբնական շինության ժամանակ ունեցել է նմանօրինակ զարդագոտի, բայց հետա-

10 Կիրակոս Գանձակեցի, էջ 92։

պայում, մեծ ժամատունը շինելուց շատ ուշ, հարավային ճակատը քայքայված է եղել և վերանորոգման ժամանակ հին քանդակները չեն պահպանվել։ Այդ երևում է նաև նրանից, որ մեծ ժամատան շինության ժամանակ շարված մուտքի պատը հյուսիսային կողմում ունի մեկը մյուսի վրա դրված երեք կիսապլան ունեցող քիվ, իսկ հարավայինի քիվը խիստ պարզ է, պատից մի քիչ դուրս է շեշտված, բայց անզարդ է։

Սակայն այստեղ հետաքրքրականն այն է, որ մարիամաշեն պողոտաձև դավիթն այժմյան երևացող իր մասերով եկեղեցուց հեռու է մնում մոտավորապես 2,5 մետրով և անմիջականորեն չի կպչում նրա արևմտյան պատին։ Պարզ է, որ այդ ինչ-որ եղանակով պետք է կապված լիներ մի կողմից՝ եկեղեցու, իսկ մյուս կողմից՝ պողոտաձև դավթի հետ։ Այդ մասի ճարտարապետությունը վերականգնելն առանց պեղումների խիստ դժվար է, որովհետև կառուցվածքից ոչ մի հետք չի պահպանվել եկեղեցու արևմտյան պատի վրա։ Պողոտաձև դավթի այդ մասի հետքերը բոլորովին անհետացել են մեծ ժամատան շինության միջոցին։ Բացառություն է կազմում պողոտաձև դավթի հարավակողմի մնացորդին կից վիճակում պահպանված մի փոքրիկ մատուռ, որ կառուցվել է մարիամաշեն դավթի շինությունից 4 տարի հետո, 1189 թ.։ Այդ մատուռը, իբրև տապանատուն, շինվել է վանքի առաջնորդ Բարսեղի եղբորորդի Դավթի միջոցներով իր Հոր՝ Վասակի և քրոջ՝ Բուրդուխանի գերեզմանների վրա։ Վասակը Կյուրիկյան թագավորների փեսան էր, Կյուրիկե III-ի դուստր Վանենու ամուսինը և այդ պատճառով էլ նրան և նրա որդիներին թույլ է տրվել թաղվել Կյուրիկյան տան տոհմական գերեզմանատան մեջ[11]։

Այս մատուռը ևս որևէ չափով չի օգնում պողոտաձև դավթի և մեծ եկեղեցու միացման ձևը պարզելուն։ Ուստի և ստիպված ենք դիմելու նմանությունների օգնությանը, իհարկե, նկատի առնելով նաև ժամանակը։ Այդպիսի մի բաց դավիթ ունի Սանահնի վանքը։ Խոսքը մեծ ժամատան մասին է, որի արևմտյան ճակատը կազմված է Հաղբատավանքի պողոտաձև դավթի հյուսիսային ճակատների երկկամար մասերին նմանություն ունեցող երեք հատվածներից, միայն այն տարբերությամբ, որ Սանահնում մեծ դավթի թաղերը ձգված են արևելքից արևմուտք և իրենց արևելյան ծայրամասով հպվում են գլխավոր եկեղեցու արևմտյան պատին[12], իսկ Հաղբատում, ինչպես ասացինք, այդ շինության թաղը երկարում է հարավից հյուսիս, այն էլ եկեղեցու արևմտյան պատից մոտ 2,5 մետր հեռավորության վրա։ Դա նշանակում է, որ այս դավիթը եկեղեցուն կարող էր միանալ որևէ օժանդակ միջոցով՝ հավելյալ մասերի օգնությամբ։ Կարելի է ենթադրել, որ այդ հին դավիթն իր արևմտյան ամբողջ երկայնքով ևս, հարավային և հյուսիսային ծայրերի նման, բաց է եղել, և նրա ծածկույթը նստած է եղել կամարավոր սյունաշարքերի վրա։ Սակայն հյուսիսային կողմի մնացորդի արևմտյան պատի մեջ պահպանվել է մի փոքրիկ լուսամուտ, որը ցույց է տալիս, որ մարիամաշեն դավթի արևմտյան պատը իսկ է եղել և սյունաշարք չի ունեցել դեռ իր ծայրամասերում, բայց

---

11 Զրիմեցին այդ արձանագրության մեջ Վասակ բառը սխալ վերծանմամբ կարդացել է Կերան, որից և պատմության մեջ առաջ է եկել գոյություն չունեցող այդ անունը (տե՛ս Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, գրեց Հ. Ղ. Մովսեսյան, Վիեննա, 1923, էջ 71)։

12 Պ. Լափաղարյան. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 36, նկար 9։

հասկանալի է, որ կենտրոնական մասում, եկեղեցու մուտքի դիմաց, մուտք է եղել։

Մի քանի աշխատությունների մեջ մեծ ժամատան կառուցումը վերագրված է 1201 թ.[13]։ Դա ակներև սխալ է. ճիշտ է, կառուցման բուն արձանագրությունը չի պահպանվել և մատենագրական տեղեկություններ մեծ ժամատան կառուցվելու ճիշտ թվականի մասին չունենք, բայց հաստատուն վկայություն կա այն մասին, որ մեծ ժամատունը շինող Հովհաննեսը վանքի առաջնորդ է դարձել Լոռվա 1208 թ. ժողովից հետո, երբ նրա նախորդը՝ Գրիգորիսը Զաքարիա Ամիրսպասալարի կողմից հաղրատ ուղարկված Մինաս եպիսկոպոսին ձեռնում է և փոխչում Գետիկի վանքը։ Այդ ժամանակ Զաքարեն նրա փոխարեն վանքի առաջնորդ է նշանակում Հովհաննես Խաչենեցուն[14]։ Նշանակում է, մեծ ժամատան շինության սկիզբը չի կարող լինել 1208 թ. առաջ։ Գանձակեցին իր պատմության մեջ երկու տեղ հիշատակում է, որ Հաղբատի մեծ ժամատունը կառուցել է Հովհաննես Խաչենեցին։ Մի անգամ այդ մասին գրում է Հաղբատի առաջնորդների շարքում Հովհաննես Խաչենեցու անունը հիշատակելիս, որպես նրա անվան հետ կապված կարևոր հանգամանք, իսկ երկրորդ անգամ՝ Հովհաննես Խաչենեցու բարեմասնություններն ու հիշատակի արժանի գործերը թվարկելիս. «բազում գործս արժանի յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս և զոռ-ականաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն»[15]։ Երկու դեպքում էլ Գանձակեցին մեծ ժամատան շինությունը թվականի տակ չի դնում։ Մեծ ժամատան կառուցումը մեզ հայտնի է Հովհաննես Խաչենեցու կյանքի վերջին տարիներին գրած մի արձանագրությունից, որի մեջ նա թվարկում է իր առաջնորդության շրջանում կատարած կարևոր գործերը։ Այդ արձանագրությունը գրված է 1221 թ., երբ արդեն վաղուց ավարտված էր մեծ ժամատան շինությունը։ Այսպիսով պարզվում է, որ վիմական արձանագրությունների տվյալներով ևս Հաղբատի մեծ ժամատան կառուցումը կապվում է Հովհաննես Խաչենեցու անվան հետ։

Մեծ ժամատան պատերին, դրսում և ներսում կան մի շարք արձանագրություններ, որոնցից միայն մի քանիսն ունեն թվական, իսկ մեծ մասը անթվական է։ Ժամատան ամենահին արձանագրությունը պատկանում է 1210 թ. և գրված է ժամատան մուտքի ճակատակալ բարի վրա։ Մի այլ արձանագրություն ունի 1220 թ., բայց երկուսն էլ շինարարական բնույթի չեն։ Մի երրորդ արձանագրության մեջ, գրված 1253 թ., տարօրինակ կերպով խոսվում է ինչ-որ ժամատան կառուցման մասին Համազասպի առաջնորդության ժամանակ։ Արձանագրության մեջ ասված է, որ Տփղեցի Շնահավորն իր ամուսնու և որդու հետ միասին ժամատան շինությանն է նվիրել 100 դահեկան։ Այս արձանագրությունը թեև քանդակված է մեծ ժամատան արտաքին պատին, կարծում ենք, որ ոչ մի կապ չունի նրա շինության հետ, որովհետև այդ ժամանակ նա վաղուց արդեն կառուցված էր և, որ գլխավորն է, նրա կառուցումը, ինչպես այդ գիտենք բազմաթիվ այլ տվյալներից, բոլորովին չի կապվում Համազասպի առաջնորդության հետ։ Ընդհակառակը, Համազասպի անվան հետ է կապ-

[13] В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, էջ 57, Հ. Սաֆարյան, Այսվերդու շրջանի կոլտուրայի հուշարձանները (ուղեցույց), Երևան, 1952, էջ 19։

[14] Կիրակոս Գանձակեցի, էջ 163-164։

[15] Նույն տեղում, էջ 164։

վում XIII դարի կեսերին շինված մի այլ ժամատուն, որին և վերաբերում է մերևում հիշված 1253 թ. արձանագրությունը։

Այսպիսով, մեծ ժամատան կառուցման սկիզբը դնելու ենք 1208 թ., Հովհաննես Խաչենեցու առաջնորդության առաջին տարին, որովհետև երեք տարի հետո, ինչպես տեսանք, այդ ժամատունն արդեն կառուցված էր առնվազն մինչև մուտքի ճակատակալ քարը, որի վրա 1210 թ. արձանագրություն կա։ Ժամատան ավարտման թվականը որոշելու առայժմ ոչ մի հիմք չունենք, բայց գիտենք, որ 1221 թ. առաջ է եղել։ Նշանակում է Հաղբատի մեծ ժամատունը կառուցվել է ոչ թե 1202 թ., երբ Հովհաննես Խաչենեցին դեռևս առաջնորդ չէր, այլ 1208-ից հետո 1210-ական թվականների ընթացքում, Խաչենեցու առաջնորդության տարիներին։

Սովորաբար շենքի գլխավոր մուտքի ճակատին լինում է նրա կառուցման արձանագրությունը, իսկ Հաղբատի մեծ ժամատան մուտքի ճակատին գրված է Զաքարե ամիրսպասալարի հրովարտակը։ Նկատի ունենալով հին հայոց սովորությունները, չենք կարող ենթադրել, որ այդ հոյակապ և ընդարձակ ժամատունը կառուցման արձանագրություն չուներ, ընդհակառակը, մենք հակված ենք ենթադրելու, որ, ժամատան կառուցման արձանագրությունը դեռևս չգրած, Զաքարեի հրովարտակին են հատկացրել այդ ամենապատվավոր տեղը և կամ ժամատան կառուցման արձանագրությունը տաշել ու նրա տեղում են վերակել Զաքարեի արձանագրությունը, որով նա Հաղբատ մեծ գյուղն էր նվիրում վանքին՝ իբրև կալվածք։

Հաղբատի մեծ ժամատունը հայկական միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից մեկն է։ Այս ընդարձակ ժամատունն իր հատակագծով մի ուղղանկյուն քառանկյունի է ս. Նշան եկեղեցու արևմտյան կողմում. 21×18 մետր արտաքին չափերով, որ ձգված է արևելքից արևմուտք։ Իր արևելյան ծայրերին, եկեղեցու արևմտյան պատին կից, ժամատունն ունի երկու զույգ կրկնահարկ փոքրիկ ավանդատներ, որոնք թեև մեծ ժամատան մասերն են հանդիսանում, բայց նրա կառուցվածքի մեջ որևէ դեր չեն խաղում։ Դրանք ժամատան գահլիճից դուրս ավելացեն կառուցվածքներ են, որ իրենց ժամանակի համար ունեցել են գործնական նշանակություն։ Այդ կրկնահարկ զույգ ավանդատներով վանքը ձեռք է բերել չորս սեղան, որոնց վրա կարելի է պատարագ մատուցել վանքի բազմաթիվ նվիրատուների հիշատակին։

Ժամատան մեջ գլխավորը նրա գեղեցիկ գահլիճն է, այսինքն բուն ժամատունը, որ ունի մոտ 240 ք. մ. մակերես, չհաշված հին գավթի մնացորդները։ Գահլիճի հատակը գրեթե ամբողջովին ծածկված է գերեզմանաքարերով, որոնց տակ թաղված են ժամանակի նշանավոր աշխարհիկ և հոգևոր մարդիկ՝ բարձրաստիճան հոգևորականներ, թագավորներ, նրանց ընտանիքի անդամներ, իշխաններ, բարերարներ և այլն։ Այս ժամատան կառուցումն ունեցել է երկու նպատակ. օգտագործել այն նախ՝ իբրև գավիթ, հավելվածական մի շինություն, որտեղ կարող էին հավաքվել եկեղեցու ունկնդիրները տոն օրերին, երբ եկեղեցու ներսում բոլորի համար տեղ չէր լինում և երկրորդ՝ որպես տապանատուն Կյուրիկյան թագավորական տան համար։

Ժամատան գլխավոր գեղեցկությունը նրա առաստաղն է, որ հիմնված է մոտ 12 մետր բացվածք ունեցող երկու զույգ միմյանց խաչաձևող կամարների վրա։ Այդ կամարների կրունկները ժամատան երեք կողմերում նստած են պատերին կից սրմնասյուների, իսկ արևմտյան կողմում՝ պատից մոտ 3 մետր

հեռու գտնվող գույց սյուների վրա։ Սակայն առաստաղի կազմությունը դրանով չի ավարտվում։ Վերոհիշյալ խաչաձևվող կամարների գլխին առաջացած քառակուսիների մեջ դարձյալ խաչաձևվող կամարներ են բարձրանում, որոնք ժամատան կենտրոնական մասն ավելի վեր են բարձրացնում և գահլիճի վեհություն հաղորդում չգերազանցված չափերի։

Վերին կամարների միջև ընկած գմբեթավորվող տարածությունը բաժանված է 9 հատվածի, որոնցից 8 կողմնակիները ձևավորված են գունավոր քարերի հարդարանքներով, իսկ կենտրոնականը՝ ծառայում է իբրև գմբեթի բացվածք և ժամատան տանիքի վրա ավարտվում է կեց սյուների վրա նստած փոքրիկ սրապատած կաթողիկեով։ Գմբեթի այդ բացվածքը ժամատան լույսի գլխավոր աղբյուրն է։

Խաչաձևվող կամարները սովորական են XIII դարի հայկական ճարտարապետության համար և կիրառվել են մեծ մասամբ ժամատների (Խորակերտ, Այնասի, Անիի Առաքելոց եկեղեցի, Հաղբատ և այլն) և սեղանատների (Հաղարծին, Հաղբատ) կառուցման մեջ, միայն այն տարբերությամբ, որ սեղանատները երկարավուն են, մոտավորապես լայնքի կրկնակին ունեցող երկայնով։ Այդ պատճառով դրանք սովորաբար կրկնագմբեթ գահլիճներ են, որոնք առաջանում են խաչաձևվող կամարների կենտրոնում իրար կողքի, իսկ ժամատների գահլիճները երկարության ու լայնության մեծ տարբերություն չունեն և նրանց մեջ ծածկի կամարները խաչաձևվում են գահլիճի կենտրոնական մասում, առաջացնելով միայն մի գմբեթ։

Հաղբատում ժամատան երկայնքը մոտ երեք մետրով ավելի է լայնքից, այդ պատճառով նրա ծածկի գմբեթավոր բացվածքը ոչ թե գահլիճի կենտրոնում է, այլ գտնվում է նրա արևելյան կողմում, որովհետև գմբեթակիր կամարները, որոնք իրենց գլխին հավասարակողմ քառակուսի են առաջացնում, ընկած են գահլիճի արևելյան կողմում և երեք կողմերով նստած են պատերին հսկած որմնասյուների վրա, իսկ արևմտյան կողմում այդ կամարները հենվում են պատից մոտ 3 մետր հեռու գտնվող գույց սյուներին։ Այդպիսով, ժամատունը չի սահմանափակվել խաչաձևվող կամարների միջև առաջացած շրջանակով, այլ երկու օժանդակ սյուների օգնությամբ իր արևմտյան մասով դուրս է եկել այդ սահմաններից և ընդարձակվել է ավելի, քան թե թույլ էին տալիս խաչաձևվող կամարները։ Ինչպես վերևում տեսանք, մեծ ժամատունը մասամբ էլ ընդարձակվել է դեպի հյուսիս և հարավ դուրս շեշտված մարիամաշեն հին գավթի պահպանված մասերի շնորհիվ, որոնք հմտորեն կապակցվել են մեծ ժամատան հետ, և չեն խանգարել նրա տեսքի ամբողջականությանը, մանավանդ որ այդ կողմերում ևս կամարները նստած են ոչ թե անմիջապես պատերին, այլ բավականին առաջացող որմնամույթերին։

Մեծ ժամատունը մեծ նորոգումների չի ենթարկվել և մինչև մեր օրերը, շնչին բացառությամբ, պահպանել է իր սկզբնական տեսքը։ Մի շարք անգամներ նորոգվել են ծածկի սալաքարերը, որ փոխարինվել են նույնպիսի սալերով, փոխվել է պատերի երեսի ցածրագիր երեսապատ քարերի մի մասը։ Սրանք ընթացիկ նորոգումներ են, որ կատարվել են անձևաջրերի հոսքի առաջն առնելու և շենքը բայքայումից զերծ պահելու համար։ Միակ նկատելի փոփոխությունը մեծ ժամատան արևելակողմի ավանդատների ծածկի փոփոխությունն է, որից զերծ չի մնացել նաև գավիթաշեն փոքրիկ տապանատունմատուռը։ Սկզբնական շրջանում այդ ավանդատներն ու հիշյալ մատուռն

իրենց վրա ունեցել են երկթեք ծածկ, բայց հետագայում, հավանաբար դարձյալ XIII դարում, ձյան ու սառույցի կուտակումից ազատվելու համար, այդ բոլորի ծածկերի վրա միակողմանի թեքություն են ստեղծել մյուս կողմի վրա ավելադիր դանդված առաջացնելու միջոցով։

3. ՀԱՄԱՂԱՍՊԱՇԵՆ ԺԱՄԱՏՈՒՆԸ

Սա վանքի գլխավոր եկեղեցուց քիչ դեպի հյուսիս կառուցված մի մեծ շինություն է, գրեթե հավասարակողմ բառակուսի մակերեսով, որի ներսի չափերը 18×18,5 մետր են, այսինքն՝ 333 ք. մ.։ Իր ճարտարապետությամբ ոչընչով չի տարբերվում սովորական ժամատներից։ Շենքի բոնած ամբողջ տարածությունը կենտրոնական չորս սյուների և յուրաքանչյուր պատից առաջացող երկու որմնասյուների միջոցով բաժանված է 9 հատվածների. մեկը, որ կենտրոնականն է և ընկած է չորս սյուների միջև, իր վրա կրում է երդիկի բացվածքը կամ բութ գմբեթը, իսկ մյուս ութը շրջապատում են կենտրոնականին, յուրաքանչյուր կողմի վրա ունենալով երեք հատված։ Շենքի բարձրությունը 7,2 մետր է, որ նրա ընդարձակության համեմատությամբ զգալի կերպով քիչ է։

Այս շենքի նշանակության և դերի մասին միմյանց հակասող բազմաթիվ կարծիքներ են հայտնվել հին ու նոր ուսումնասիրողների կողմից։ XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին, որ ժամանակակից էր Համազասպ առաջնորդին, վերջինիս շինարարական գործունեության մասին գրել է. «Սա (Համազասպ) շինեաց եկեղեցի հրաշալի, ս տեղի ուր զզանգական կախեն, և ժամատուն մի մեծ և սքանչելի»[16]։ Ուսումնասիրողներից շատերը տարակուսանքի մեջ են ընկել այդ խոսքերից, ենթադրելով, որ Գանձակեցին Համազասպին է վերագրում Հաղբատում կառուցված երեք տարբեր շենքեր՝ մի եկեղեցի, մի զանգակատուն և մի ժամատուն։ Բայց ինչպես հայտնի է, տեղում միայն երկու շենք կա Համազասպի ժամանակ կառուցված, մեկը՝ զանգակատունն է, իսկ մյուսը՝ վերևում նկարագրված ժամատունը։ Այստեղ, կարծում ենք, սխալ են մեկնաբանված Գանձակեցու խոսքերը։ Նա ոչ թե երեք տարբեր շենքեր է թվարկում, ինչպես կարծել են, այլ միայն երկուսը՝ մեկը եկեղեցին և զանգակներ կախելու տեղը, իսկ մյուսը՝ ժամատունը։ Եվ իրոք, զանգակատունը միաժամանակ եկեղեցի է. այն էլ բազմախորան եկեղեցի։ Նրա ներսում երեք տարբեր հարկերում կան յոթ սեղաններ։ Այնպես որ, Գանձակեցին այդ զանգակատունը միաժամանակ եկեղեցի է անվանել։ Ճիշտ այդպես է բնորոշված զանգակատունը նաև իր վրայի կառուցման արձանագրության մեջ. «շինեցաւ դեղեցկազարդ տաճարս Աստուծոյ՝ դարթուցանող փառարանչաց տեառն՝ եթն խորանաւ»։

Հետագա ուսումնասիրողները ճիշտ չեն հասկացել Գանձակեցուն և ուշադրություն չեն դարձրել շինության արձանագրության վրա։ Հովհաննես Զրիմեցին Համազասպի շինած ընդարձակ շենքը համարում է եկեղեցի։ Իր անտիպ աշխատության մեջ նա գրում է. «Ի հիւսիսակողմն սուրբ նշան աւադ տաճարին՝ կից ընդ որմն հիւսիսային դաւթի է եկեղեցին մեծ կոչեցեալն Հա-

16 Կիրակոս Գանձակեցի, էջ 93։

ադասպ»[17]։ Այնուհետև Ղրիմեցին, մեկնաբանելով Գանձակեցու վերոհիշյալ տեղեկությունները, ասում է. «Ժամատուն ասելով՝ ակնարկև յայս եկեղեցի»[18]։

Սույն տեսակետն է հայտնված նաև Ղրիմեցու ուսերեն համառոտ հրատարակության մեջ[19]։



Նկ. 2. Համադասպաշեն ժամատան և նրա կից եկեղեցու հատակագիծը

Ղաֆադրությունն ճարտ. Հովհ. Հակոբյանի

Սակայն Ղրիմեցին, հավանարար հենվելով Գանձակեցու տեղեկությունների սխալ մեկնաբանման վրա, ենթադրում է, որ ժամատան արևելյան մասում Համադասպը կառուցած է եղել մի եկեղեցի, բայց հետագայում այն ավերվել է և փոխարենը ուշ ժամանակներում կառուցել են այժմ գոյություն ունեցող փոքրիկ մատուռը, որ կից է Համադասպի ժամատանը։

Այս ենթադրությունը չի հաստատվում հնագիտական տվյալներով, որովհետև տեղում չկան քանդված և վերակառուցված եկեղեցու հետքեր։ Դրան հակառակ, տեղի ուսումնասիրությունից պարզվում է, որ ժամատան կից փոքրիկ եկեղեցին կամ մատուռն ավելի հին է, քան ժամատունն ինքը, հետև-

17 «Պատմութիւն Վանից Հայրատայ», ձեռագիր արտագրություն, էջ 101։

18 Նույն տեղում։

19 «Описание монастырей Ахпатского и Санагинского Иоанна Крымского», СПб, 1869, էջ 21։

վապես այդ մեծ ժամատունը կառուցվել է փոքրիկ եկեղեցուն կից, իբրև նրա ժամատունը կամ գավիթը։

Այլ կարծիք է հայտնել այս ժամատան մասին նաև Ռոստոմ Բեգ Երզրնկյանցը։ Նա գրում է, որ մեծակառույց այն գավիթը, որ Համազասպ է կոչվում, ոմանց ասելով հնում ծառայել է իբրև ատյան թագավորական և իշխանական խորհուրդների համար։ Իր տեսակետը նա փաստարկում է նրանով, որ այդ շենքը կառուցվածքով գավթի նման չէ, քանի որ գավիթները եկեղեցիներին կից են լինում, իսկ այս շենքն առանձին է[20]։ Հավանաբար ուշ ժամանակի վանքի միաբաններն են ենթագրաբար այդ շենքը ատյան համարել և այդ մասին տեղեկություն տվել Ռոստոմ Բեգ Երզնկյանցին, որովհետև, ինչպես ինքն է ասում, ոչ պատմական երկերում և ոչ էլ ավանդությունների մեջ ստույգ տեղեկություններ չկան այդ շենքի նշանակության մասին։

Երվանդ Լալայանը ևս այս շենքի մասին որոշակի բան չի ասում։ Կրկնելով Երզնկյանցին նա գրում է. «Որոշապես հայտնի չէ, թե սա ինչ է եղել... սակայն եկեղեցու նմանություն չունի, իբր գավիթ է, կից չէ մի որևէ եկեղեցու։ Ուստի և կարծում են, թե սա խորհրդարան պիտի լինի, միայն հայտնի չէ թե տեղական իշխանների, թե՞ վանական միաբանության համար»[21]։

Նորագույն ուսումնասիրությունների մեջ նույնպես այդ շենքի նշանակության մասին կան տարբեր տեսակետներ։ Վ. Հարությունյանն ու Ս. Սաֆարյանը գրում են, որ Համազասպի կառուցած ժամատունը հայ ճարտարապետության մեջ միակն է, որ եկեղեցուց անկախ առանձին է կառուցված և ենթադրում են, որ այդ շենքը դպրոց է եղել։ Այս ուսումնասիրողները ծանոթ են նաև ժամատան արևելյան կողմի կից եկեղեցուն, բայց վերջինս անորոշ բառով անվանում են բարձրադիր հատակով փոքրիկ սենյակ (небольшая комната с приподнятым полом) չնայած այն բանին, որ կառույցը թեև փոքր է, մատուռանման, բայց բոլոր հատկանիշներն ունի եկեղեցի համարվելու[22]։ Ն. Տոկարսկին համազասպաշեն ժամատունը համարել է ժողովարան, իսկ նրան կից փոքրիկ շենքը (եկեղեցին) ժողովների ժամանակ կրոնական մաղթանքներ կատարելու տեղ[23]։ Ստ. Մնացականյանը, որ հատուկ ուսումնասիրություն է գրել հայկական հին ժամատների մասին, որոշ վերապահումով ընդունում է Տոկարսկու տեսակետը և իր կողմից լրացնում, որ Հաղբատի նման մի վանք, որ մի քանի հարյուր միաբան է ունեցել, անհրաժեշտորեն պետք է ունենար ընդարձակ ժողովարան։ Այնուհետև, առանց հերքելու Տոկարսկու այն կարծիքը, թե փոքրիկ եկեղեցին կրոնական մաղթանքների է ծառայել ժողովների միջոցին, Ստ. Մնացականյանն ավելացնում է, որ փաստորեն այդ փոքրիկ

20 Ռ ո ս տ ո մ Բ ե գ Ե ր զ ն կ յ ա ն ց. Հնախոսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից, էջ 36։

21 Ե. Լ ա լ ա յ ա ն, Բորչալուի գավառ, հատ. Ա., գիրք 7—8, էջ 402։ Լալայանն իր տեղեկությունները քաղել է Ռոստոմ Բեգ Երզնկյանցից և կրկնել նրա սխալները, օրինակ, ժամատան բարձրությունը գրել է 49 արշին (35 մետր), այնինչ իրականում 7,2 մ. է։ Սխալ են նաև լայնքի և երկարության չափերը։

22 В. М. А р у т ю н я н и С. А. С а ф а р я н. Памятники армянского зодчества, էջ 57։

23 Н. М. Т о к а р с к и й, Архитектура древней Армении, էջ 172։ Տե՛ս նաև նույն հեղինակի Архитектура Армении IV—XIV вв., էջ 283։

շենքն իր բարձրադիր հատակով ժողովարանի համար ծառայել է իրրև հնչականությունն ուժեղացնելու միջոց, իրրև ռեզոնատոր[24]։

Վերևում հիշատակված ժամատան մասին սխալ տեսակետներն առաջացել են այն կարծիքից, թե իբր այդ ժամատունն առանձին է և կից չէ որևէ եկեղեցու։ Դեռ ավելին։ Այս ժամատան գոյությամբ շատերն աշխատել են ապացուցել, թե ժամատներն ու գավիթները կարող են ինքնուրույն կերպով գոյություն ունենալ և եկեղեցիներին կից չլինել։ Օրինակներից մեկն էլ Խաղբակյան Պապաք իշխանի Գեղարդավանքում շինած վիմափոր ժամատունն է, որն իրոք առանձին է, բայց այդ առանձնությունը, ինչպես նշել է նաև Ստ. Մնացականյանը, ոչ թե սկզբունքի հետևանք է, այլ արդյունք է այն բանի, որ անհնար է եղել արևելյան կողմում ժայռի մեջ եկեղեցի փորելը. նույնիսկ այստեղ, ժամատնից ցած գտնվող եկեղեցու մեջ անցք կա, որտեղից կարելի է լսել ժամերգությունը։

Համազասպի այս ժամատունը ոչ թե առանձին, եկեղեցուց անկախ շինություն է, ինչպես կարծում են շատերը, այլ մի ժամատուն է, որ շինված է մի փոքրիկ եկեղեցու համար։ Այդ եկեղեցին իր արևմտյան կողմի լայն բացվածքով միանում է ժամատանը։ Այդ միացումով, եթե ոչ երկու շենքերի համաչափությամբ, գեթ սկզբունքորեն պահպանված է ժամատների կամ գավիթների ընդհանուր իմաստը, այսինքն այն, որ գավիթները կամ ժամատները պարտադիր կերպով եկեղեցիներին կից են, այլապես գավիթ կամ ժամատուն չեն լինի։

Ժամատները երկու, երբեմն էլ երեք անգամ մեծ են լինում իրենց եկեղեցիներից, բայց ոչ ավելի, իսկ Համազասպի շինած ժամատունը շատ մեծ կառուցվածք է. այն ունի 18×18,5 մետր մակերես, այսինքն 333 քմ.[25], իսկ նրան կից փոքրիկ եկեղեցին ունի ընդամենը 20 քմ. մակերես։ Այսինքն եկեղեցին իր ժամատնից փոքր է 16,5 անգամ։ Բայց չմոռանանք, որ Համազասպի ժամատունը Հաղբատավանքի ամենաընդարձակ շինությունն է, թեև բարձրությունն անհամաչափորեն փոքր է և դա այդ ժամատան կոնստրուկտիվ թերությունն է։ Ժամատան համեմատությամբ եկեղեցու այս անսովոր փոքրությունն է պատճառը, որ ուսումնասիրողներն անտեսել են նրան և ժամատունը հայտարարել առանձին կառուցվածք։

Ժամատունն ունի կառուցման արձանագրություն, որտեղ շենքը համարվել է «մեծափառ տունս աստուծոյ»։ Դրանից էլ երևում է, որ ժամատունը կառուցող Համազասպի աչքում ևս ինքնուրույն, եկեղեցուց անկախ շինություն չի եղել, այլ համարվել է եկեղեցու (աստծու տան) մի մասը։ Սակայն մի այլ արձանագրության մեջ գրված է, որ Շնահավոր Տփխեցին (Թբիլիսեցի) 1253 թ. իր ամուսին Ռուսուդանի և որդիների հետ միասին 100 սպիտակ է տվել ժամատան շինությանը և Համազասպ առաջնորդն ու մյուս միաբանները ընդունել են այդ նվերը և այլն։ Այս շինության ժամատուն լինելու ապացույցներից մեկն էլ այն է, որ հատակին կան արձանագրած և անարձանագիր տապանաքարեր։ Ինչպես հայտնի է, հնում միայն ժամատներում էր թույլ տրվում թաղումներ կատարել, իսկ բուն եկեղեցիներում՝ երբեք։

---

[24] С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, էջ 73։

[25] Այս ժամատունն ըստ Ստ. Մնացականյանի ունի մոտ 400 քմ. մակերես (նշվ. աշխ., էջ 75), ըստ Վ. Հարությունյանի և Ս. Սաֆարյանի՝ 250 քմ. (էջ 57)։ Մենք հաշվել ենք ճարտ. Հովհ. Հակոբյանի չափագրությունների հիման վրա, այդ պատճառով էլ մեր թվերը մոտավոր են։

Գ. ԳՐԱՏԻՆԸ

Միջնադարյան Հայաստանում մեծ համբավ է վայելել Հաղբատի գրատունը, որտեղ պահվել է հայերեն լեզվով գրված ամենքան։ Կան տեղեկություններ այն մասին, որ վանքի գիտուն միաբաններն աշխատում էին իրենց չունեցած գրքերն անպայմանորեն արտագրել որևէ տեղից և պահել գրատանը։ Հաղբատն ունեցել է գրչության իր դպրոցը, իր գիտնականները, որոնցից մի քանիսը մեծ հռչակ են վայելել ամբողջ Հայաստանում։ Այնտեղ գրվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնց թվում մի քանի գլուխգործոցներ, ինչպիսին է, օրինակ, Հաղբատի (Գետաշենի) 1211 թ. ավետարանը, որ ծաղկել է նկարիչ Մարգարեն։



Նկ. 3. Գրատան ներքր դրապահոցի դարակով

Հնում Հաղբատի ձեռագրերը համարվել են ընտիր և լավ օրինակներ, որոնք արտագրվել են գրագետ մարդկանց կողմից, այդ պատճառով էլ մյուս վանքերն աշխատել են արտագրությունները կատարել Հաղբատի գրատան օրինակներից։ Հաղբատի գրատան ձեռագրերի ընդհանուր թվի մասին այսօր ոչ մի տեղեկություն չունենք, բացի մի քանի կողմնակի վկայություններից, որոնք նշում են գրադարանի հարուստ լինելը և բազմաթիվ ձեռագրեր ունենալը։ Դժբախտաբար, այդ հարուստ մատենադարանից շատ քիչ բան է հասել մեր ձեռքը։ Հաճախակի կատարված ավերածություններից բացի, վանքի տգետ միաբանները «հնացած» ձեռագրերը կուտակել են և այրել։

Պատմությանը հայտնի չէ, թե երբ է շինվել Հաղբատի գրատունը. այդ մասին որևէ գրավոր վկայություն չի պահպանվել տեղում, բայց արձանագրություններից գիտենք, որ գրատան շենքը մեծ փոփոխությունների է ենթարկվել XIII դարի վերակառուցման ժամանակ և, հավանաբար, այդ ժամանակ ոչնչացել է նրա կառուցման արձանագրությունը։

Հաղբատում ձեռագիր գրքերի հավաքումն սկսվել է վանքի հիմնադրման օրից։ Բազմաթիվ արձանագրությունների մեջ հիշատակվում են ձեռագիր գրքերի նվերներ, որոնք զանազան անձինք նվիրաբերել են վանքին։ Այսպես, օրինակ, 1083 թ. (արձ. № 11) Դավիթ Անհողինի որդի Սմբատ թագավորը վանքին է նվիրել մի ավետարան իր և եղբոր՝ Կյուրիկեի «փրկության համար»։ Կյուրիկեի դուստր Մարիամը վանքին է նվիրել զոսկեմած մի ավետարան (արձ. №№ 44 և 45)։ 1221 թ. Հովհաննես Խաչենեցին իր կարևոր գործերի մեջ հիշատակում է նաև այն, որ վանքը հարստացրել է ձեռագիր գրքերով (արձ. № 50)։ 1243 թ. Ուրանանց տոհմից Դավիթն իր տված նվերների մեջ հիշատակում է նաև մի ՀՐԱՏՈՒ ավետարան։ Գրքերի նվիրատվություն է հիշատակվում նաև XIII դարի մի քանի այլ արձանագրությունների մեջ։ Բազմաթիվ այդպիսի տեղեկություններ են պահպանվել նաև ձեռագրերի հիշատակարաններում։

Հասկանալի է, որ վանքի հիմնադրման առաջին տասնամյակներում գրքերը և եկեղեցու թանկարժեք անոթները պահվել են եկեղեցու ավանդատներում, ինչպես սովորություն էր հնում, իսկ հետո, երբ գրքերի թիվը մեծացել է, վանքի հովանավոր թագավորները կառուցել են գրատան համար հատուկ շենք, որը հին ժամանակներում կոչվել է նաև նշխարահուց։ Այդպես է կոչվել գրքերի հետ պահվող եկեղեցական թանկարժեք առարկաների պատճառով։

Գրատան պատերին պահպանվել են մի շարք արձանագրություններ, որոնցից ամենահինը պատկանում է 1179 թ. և գրված է մուտքի դիմին։ Այս արձանագրությունը ցույց է տալիս, որ արդեն XII դարում Հաղբատում գոյություն է ունեցել գրատան առանձին շենք։

Տեղում կատարած քննությունների հիման վրա եկել ենք այն եզրակացության, որ Հաղբատի գրատունը կառուցվել է XI դարի կեսերին, մոտավորապես Սանահնի գրատան կառուցման ժամանակ, գուցե և մի քանի տասնամյակ նրանից առաջ։ Այդ եզրակացությանն ենք հանգել հետևյալ պատճառներով.

ա. Հաղբատի գրատունն իր կառուցվածքով և ներքին հարմարանքներով շատ նման է Սանահնի 1063 թ. կառուցված գրատանը, բայց Հաղբատինը ավելի դախնական է։

բ. Հաղբատի գրատան հին պատի արտաքին երեսը պահպանվել է միայն հարավային կողմում։ Այդ պատը մնացած բոլոր պատերից տարբերվում է շարվածքով, քարերի անկանոն տաշվածքով, հաստությամբ և անհամաչափ մեծությամբ։ Այդ բոլոր հատկանիշները ցույց են տալիս նրա հնությունը մյուս պատերի համեմատությամբ, որոնք շատ տեղերում հենված են այդ հին պատի վրա։

գ. Հաղբատի գրատունը, ինչպես բիչ հետո կտեսնենք, նախապես փայտածածկ է եղել. եթե նա Սանահնի գրատնից ավելի ուշ շինված լիներ, հազիվ թե Հաղբատի միաբաններն ու նրանց հովանավորները համաձայնվեին Սանահնի քարածածկ գեղեցիկ գրատան դիմաց փայտածածկ նման մի շենք կառուցել։

Հաղբատի գրատունն իր ներսում, Սանահնի գրատան նման, ունի պատերի մեջ խոր ընկած խորշեր, որոնք գրքերի և անոթների համար ծառայել են իբրև պահարան։ Գրատան արևելյան պատն ունի երեք այդպիսի պահարան, որոնցից կենտրոնականը մեծ է, իսկ կողքինները՝ համեմատաբար փոքր։ Այդ պահարանները թեև պատի նկատմամբ միմյանցից համաչափ հեռավորության

վրա են գտնվում, բայց XIII դարում կատարված վերակառուցման ժամանակ հին պատերի երեսին շինված որմնասյուների հետ չեն հարմարվել. այդ պատճառով թեև կենտրոնական խորշը պահպանվել է պատի կենտրոնում, բայց մյուս երկու խորշերը մասամբ մնացել են որմնասյուների տակ։

Գրատան հյուսիսային և հարավային պատերի մեջ պահպանվել է միմյանց չհամապատասխանող դիրքերում գտնվող մեկական խորշ, սակայն երևում է, որ վերակառուցման ժամանակ գրատան պատերը մեծ մասամբ վերաշարվել են և նրանց մեջ եղող խորշերից շատերը փակվել։ Գրատան արևմտյան կողմի պատը, որտեղ գտնվում է նրա միակ մուտքը, ավելի մեծ փոփոխությունների է ենթարկվել, և նրա մեջ նախապես շինված խորշերը բոլորովին անհետացել են։

Ուշագիր քննությունը ցույց է տալիս, որ գրատան հին շենքն իր բոլոր պատերին ունեցել է երեքական խորշ, կենտրոնականը՝ մեծ և լայն, կողմնայինները՝ համեմատաբար փոքր, բացի արևմտյան պատից, որտեղ կենտրոնական խորշի փոխարեն եղել է մուտքի բացվածքը։ Հին գրատան պատերը հարթ են եղել, նրանց վրա չկա ոչ մի որմնամույթի կամ որմնասյան հետք։ Պարզ է, որ հարթ պատերի գլխին շենքը չէր կարող ունենալ քարե ծածկ, որովհետև քարե ծածկը հենվում է կամ պատերի հիմքից բարձրացող որմնասյուների և կամ պատերի վերին մասերում առաջացող որմնակամարների կրունկների վրա։ Այդ բոլորի բացակայությունը հին պատերի պահպանված մասերում, ինչպես նաև շենքի՝ կանոնավոր քառակուսու մոտեցող հատակաձևը մեզ բերում է այն եզրակացության, որ գրատան հին շենքը, հայկական գլխատների նման, ունեցել է փայտե գմբեթավոր ծածկ, երդիկի լայն բացվածքով, որտեղից լույս է ստացել։ Գլխատան կամ երդիկավոր շենքի գոյությունը Հաղբատում հաստատվում է մինչև մեր օրերը պահպանված վանքի օժանդակ շենքերով, որոնք գտնվում են սեղանատան արևելյան կողմում, պարսպի ներսում։

Մեզ թվում է, որ XIII դարի վերակառուցման հիմնական նպատակը գրատան ծածկը փոխելն է եղել։ Այդ ժամանակ գրատան ներսում, հարթ պատերի երեսին, հավելյալ կերպով կառուցել են որմնասյուներ, որոնք հիմք են ծառայել ծածկի խաչաձևվող կամարների համար։ Այժմ էլ գրատունն իր լույսն ստանում է ծածկի կենտրոնում բացված բուն գմբեթի անցքից։ Գրատան վերակառուցումը տեղի է ունեցել 1273 թ. առաջ, վանքի առաջնորդ մի քանի Հովհաննեսներից մեկի նախաձեռնությամբ, որը գրատան վերակառուցման հետ միասին շինել է նաև նրա միջանցքը և, այսպես կոչված, փոքր գավիթը։ Վերջինս իրականում մի բաց նախասրահ է՝ կառուցված ս. Նշանի և համագասպաշեն ժամատան միջև։ Գրատան այս վերակառուցման մասին մենք տեղեկանում ենք գրեթե միևնույն բովանդակությունն ունեցող երկու տարբեր արձանագրություններից, որոնցից մեկը թվակիր է, գրված 1273 թ., «Ամենափրկիչ» խաչքարի թիկունքին, իսկ մյուսը՝ թվական չունի և փորագրված է մեծ, բայց խիստ պարզ գծագրություն ունեցող մի խաչքարի թիկունքին, որը հենված է գրատան միջանցքի արևելյան պատին։ Մեր կարծիքով, այս վերջինը մի քանի տարով հին է 1273 թ. արձանագրությունից։ Վանքի առաջնորդ Հովհաննեսը նախապես քանդակել է տվել այդ պարզ խաչքարը և նրա թիկունքի արձանագրության մեջ թվարկել իր կատարած կարևոր գործերը, որոնց թվում նաև գրատան շինությունը, բայց հետո, 1273 թ., կազմել է տվել

«Ամենափրկիչ» խաչը և իր գործունեության վերաբերյալ արձանագրությունը նույնությամբ արտագրել է տվել այս խաչքարի թիկունքին։ Եվ որպեսզի նախորդը չկարդան, հին խաչքարը տարել-հենել է գրատան միջանցքի պատին։ «Ամենափրկիչ» խաչքարի արձանագրության բովանդակության մեջ Հովհաննես առաջնորդը նշել է նաև այս խաչքարը, իրրև իր գործունեությանը վերաբերող կարևոր մի դրվագ։ Այս բոլորից եզրակացնում ենք, որ գրատունը վերակառուցվել է 1273 թ. առաջ, բայց ոչ շուտ 1258-ից, որը Հովհաննեսի առաջնորդության առաջին տարին է, և ոչ էլ ուշ, քան 1262 թ., որովհետև գրատան մուտքի ճակատին կա այդ թվականը կրող մի արձանագրություն։ Կարծում ենք, որ այդ գրատան կառուցումը միջնադարյան պայմաններում պետք է տևած լիներ առնվազն երեք տարի, ուստի սխալված չենք լինի, եթե եզրակացնենք, որ գրատունը վերակառուցվել և նրա միջանցքը շինվել է 1258—1262 թթ. ընթացքում։

Միջին դարերում դուր և կալվածք նվիրաբերում էին եկեղեցիներին, որպեսզի նրանց սպասավորներն ապրեին նվիրատուների հոգու փրկության կամ արևշատության համար։ Այդ բովանդակությամբ հաղարավոր արձանագրություններ են պահպանվել ամենուրեք. Հաղբատի արձանագրությունների մեծ մասի բովանդակությունն էլ այդ է, բայց այստեղ պահպանվել են նաև մի շարք արձանագրություններ, որոնցից երևում է, որ գրատունը ևս բազմաթիվ նվերներ է ստացել եկեղեցիներից անկախ։ 1273 թ. մի արձանագրությունից իմանում ենք, որ Սարգիս վարդապետը, Ախատելը և նրա հարաբույր Ռուզուբանը գրատանը նվիրել են («ընծայեալ ի գրատունս») «հայրենի այգիքն և զգնուածն զՊապ(անց) այգին»։ Մի այլ՝ 1179 թ. արձանագրությունից տեղեկանում ենք, որ Համազասպի որդի Արամն իր հայրենի այգին նվիրել է «ի գրատունս Հաղբատայ»։ Նույն արձանագրությամբ ոմն Կուտ ևս իր այգին գրատանն է տվել («գրատունս Ետու»)։ Այդ նույն արձանագրության մեջ հիշատակված է, որ Սիրամարդը և Զխի որդի Սարգիսը նույնպես իրենց այգիները նվիրել են գրատանը։

XIII դարի անթվական մի արձանագրություն հաղորդում է, որ Կուլաղանց Վահրամն իր գնած այգին, որ Երդիկումն է, նվիրել է «ի գրատունս»։

Մենք հեռու ենք այն մտքից, թե գրատունն իր առանձին տնտեսությունն ու կալվածքներն է ունեցել, բայց գրատան անունով կատարված նվերները, որ, ի դեպ, այլ վայրերում էլ են հանդիպում, ցույց են տալիս, որ գրատունը սոսկ գրապահոց չի եղել, այլ ճանաչվել է իրրև մտքի նվիրական մի տաճար։ Գրատունը հետագայում, հավանաբար XVI—XVII դարերում, վանքի միաբաններն օգտագործել են տնտեսական նպատակների համար, վերածել են մառանի և նույնիսկ մոռացել, որ այդ շենքը նախկինում գրատուն է եղել։ Հովհաննես Ղրիմեցին XIX դարի սկզբներին գրատան շենքն անվանել է մառաճատուն։ Նա գրում է. «Այս շինուած սովորաբար այժմ մառանատուն կոչի, կամ մառան. և ուր ուրեմն նշխարատուն կամ նշխարախուց, յորում պահին միաբանեցն պարենք և են ի նմա կարասք գինւոյ մեծամեծք և փորունք ի վաղ ժամանակաց անտի թաղեալք ի գետնի ըստ սովորութեան կոդմանցս»[26]։

Մինչև այժմ էլ գետնի մեջ թաղված կարասները պահպանվել են իրրև վկա այն բանի, որ վանքի միաբանները գրատունը դարձրել են մառան, իսկ

---

26 Յովհաննես Ղրիմեցի, Պատմութիւն վանիցն Հաղբատայ, էջ 95։

վանքի բազմաթիվ ձեռագրերն այդ ժամանակ պահված են եղել մոտակա անմատչելի քարայրների մեջ, որպեսզի թշնամու ձեռքը չընկնեն։ Ըստ երևույթին, Հաղբատի ձեռագրերը մերձակա բնական ժայռախոռոչների մեջ պահվել են բավականին վաղ ժամանակներում, XIV—XV դարերում, որովհետև հետագայում նրանց մասին մոռացել են և միայն XVIII դարում են որոնել ու գտել, առանց նախապես նրանց տեղն իմանալու։ Հովհաննես Ղրիմեցին նշում է, որ 1777 թ. Հաղբատի առաջնորդ է նշանակվել Աբրահամ անունով մի բախտախնդիր և տգետ վարդապետ, որը գանձ գտնելու նպատակով իր փոքրավորի հետ ամենուրեք որոնումներ է կատարել և քանդել, փչացրել հուշարձանները։ Այնուհետև սկսել է փնտրել Հաղբատի մերձակա քարայրներում և մի անմատչելի քարայրի մեջ գտել է բազմաթիվ հին ձեռագրեր, որոնք այդտեղ են պահված եղել անցյալում, թշնամու ավարառությունից փրկելու նպատակով։ Մի ամբողջ ամիս շարչարվելով, նա բոլոր ձեռագրերը քարայրից իջեցրել-բերել է տվել վանք և լցրել զանազան տեղեր՝ զանգակատան ներքնահարկը, մատուռների և եկեղեցիների խորանների մեջ և այլուր։ Այդ տեղերում ձեռագրերը հետզհետև սկսել են փչանալ և պակասել։ Սակայն դրանով չի վերջացել ամեն ինչ։ Մի օր Աբրահամ վարդապետը իր փոքրավորի հետ առանձնացրել է ամենաարժեքավոր հնացած ձեռագրերը, կազմահան եղածներն ու թերթերը թափածները, այդ բոլորից 10—12 ոտնաչափ բարձրությամբ կույտ կազմել և այրել իրրև անպետքացած և անօգտագործելի դարձած բաներ։

Մի քանի խոսք գրատան միջանցքի կամ գրատան սրահի մասին։ Այս շենքը, ինչպես ասացինք, կառուցված է գրատան հետ միասին և, ինչպես երևում է նրա տարօրինակ կազմությունից, որևէ ինքնուրույն նպատակի չի ծառայել, այլ միայն օժանդակ նշանակություն է ունեցել։ Այս սրահը կազմված է երեք հատվածներից և վանքի գլխավոր եկեղեցու արևելյան պատին զուգահեռ, հյուսիսից դեպի հարավ երկարող մի շինություն է։ Հարավային հատվածը, որն ամբողջի մոտ մեկ երրորդն է կազմում և բռնում է եկեղեցու լայնքի հարավային կեսը, թաղով է ծածկված և իր մակերեսով գրեթե հավասարակողմ քառանկյունու տեսք ունի (5,8×5,9 մետր)։ Երկրորդ հատվածը, նախորդի հյուսիսային կողմում, բռնում է եկեղեցու արևելյան պատի հյուսիսային կեսը և բոլորովին այլ տեսք ունի։ Այս հատվածն էլ նախորդի նման գրեթե հավասարակողմ քառանկյունի է (6,0×5,5 մետր), բայց այստեղ ծածկի խնդիրն ուրիշ կերպ է լուծված. մի մասը ծածկված է, իսկ եկեղեցու արևելյան պատին կպած մասը ծածկ չունի։ Այդ տարածությունն անծածկ է թողնված, որպեսզի եկեղեցու ավագ սեղանի կենտրոնում բացվող նեղ և երկարավուն լուսամուտը չփակվի և դրսից բնական լույս ստանա։ Այդ հատվածի արևելյան կեսի ծածկը մի սյան միջոցով բաժանվում է երկու մասի։ Սրահի երրորդ հատվածը նեղ միջանցքի տպավորություն է թողնում իր 2,5 մ. լայնքով և կազմում է երկրորդ հատվածի անծածկ մասի անմիջական շարունակությունը դեպի հյուսիս, այս մասը ծածկված է թաղով և իր մի ծայրով հասնում է մինչև գրատան մուտքը։ Այստեղ միջանցքն իր հյուսիսային ծայրով կապվում է մի կողմով գրատան մուտքի և մյուս կողմով՝ ս. Նշան եկեղեցու, այսպես կոչված՝ փոքր գավթի կամ փոքր ժամատան արևելյան մուտքի հետ։ Այս միջանցքի կառուցման նպատակը հասկանալի է դառնում, երբ ուշադրություն ենք դարձնում տեղի թեքադիր վիճակի վրա։ Հարցն այն է, որ գլխավոր եկեղեցու արևելյան կողմի բարձրադիր սարալանջի վրայից անձրև-

վաղուրը հոսել է դեպի ցածրադիր մասերը, որտեղ կառուցված է եկեղեցին։ Եկեղեցու արևելյան պատն անձրևաջրից պաշտպանելու համար կառուցել են գրատան միջանցքը, որը գրեթե ամբողջովին թաղված է հողաշերտի տակ, և, սիաժամանակ, գրատան համար ծառայում է իբրև բարձկարդ և ճարտարապետորեն լավ ձևավորված միջանցք։

НЕКОТОРЫЕ АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ АХПАТСКОГО МОНАСТЫРЯ

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

Ахпатский монастырь, основанный в 976 г., являлся крупным религиозным и культурным центром феодальной Армении в средние века и играл важную роль в истории Лорийского царства Кюрикидов и в период правления Захаридов в XIII в.

В X—XIII вв. монастырь обогатился многими замечательными памятниками зодчества.

Главный собор был построен в течение 15 лет (976—991), по всей вероятности придворным архитектором анийских царей Багратидов — Тиридатом. Это предположение подтверждается архитектурными особенностями и преданием, которое передавалось из уст в уста в течение многих веков.

Главный притвор, в котором служащие основой всего перекрытия перекрещивающиеся арки повторяются дважды — одни над другими,— построен в 1208—1220 гг. на месте более старого и маленького гавита, построенного в 1185 г. на средства дочери царя Кюрике III — Мариам.

Жаматун Амазаспа — не самостоятельное здание светского характера или судилище, как предполагают некоторые современные исследователи (В. М. Арутюнян, С. А. Сафарян, Н. М. Токарский и др.), а обыкновенный притвор церкви, примыкающий к ней с восточной стороны.

Библиотека первоначально была построена в середине XI в. и имела деревянное шатровое перекрытие в виде «глхатуна». В 1258—1260 гг. библиотека была перестроена, и деревянное перекрытие было заменено каменным. В это же время была построена так называемая галерея библиотеки на восточной стороне главного собора.